



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 7 ՆՈՅԵՄԲԵՐ, 2016

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ԲԱՆ Ղ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Քարեբանուած երկնաւոր Աստուած,
միակ արարիչ, ամենակալ Տէր, ահեղ մեծութիւն,
օրհնաբանելի գթութիւն, խոստովանելի ողորմութիւն,
երկրպագելի բարեբարութիւն, պաշտելի խնամակալութիւն,
տօնելի մարդասիրութիւն, խնկելի պահպանութիւն,
անմահն բարձրեալ, մերձաւոր կամարար,
անկասկածելի ապաւէն, սիրտերու միխիթարիչ,
վիշտերու փարատող, ցաւերու ապափնոց,
պարտքերու ջնջող, կարիքներու դարմանող,
կիրքերու կարգաւորող, խօսքերու ուղղիչ, լեզուի սանձ տուող,
շունչի պահպանութիւն, մտածումներու ամփոփիչ,
կամփի կրթարան, յուզումներու դադարեցնող,
մրրիկներու հանդարտութիւն, ծփանքներու խաղաղութիւն,
որ ամէն կողմ ընթացող անձնիշխանութեանս թելերէն
կը բռնես եւ իմաստութեամբ հնազանդեցնելով Քեզի կը դարձնես:
Քեզի փառք յաւիտեանս. ամէն:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ բռն հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ բռն արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ԵՐԳ ԵՐԳՈՅ 7:1-13



Փեսան շարունակելով իր սիրոյ երգը, կ'արտայայտուի ըսելով. «**Ինչ գեղեցիկ են քայլերդ կօշիկներով, ով իշխանի աղջիկ»:**

Հեքաբրքրական արտայայտութեամբ Փեսան քովեսարը կ'ընէ Հարսին երբ Ան կ'անդրադառնայ Հարսին քայլերուն, ու մանաւանդ՝ այդ քայլերը կօշիկներով: Առաջին իսկ առիթով մենք ուրբերու արտայայտութիւնը կը գտնեն Աստուածաշունչին մէջ Ծննդոց 3:15 «Քու ու կնոջ մէջբեղ, քու սերունդիդ ու անոր սերունդին մէջբեղ թշնամութիւն պիտի դնես: Ան քու գլուխդ պիտի ջախջախէ եւ դուն ալ անոր գարշապարը պիտի խաթես»: Մեղքին պարճառով եղած դաքապարտութիւնն է որ Տէրը կու փայ Օծին: Ընդհանրապէս գարշապար խայթելու երեւոյթը կը նշանակէ խափել: Ինչպէս որ էր պարագան Յակոբին եւ Եսաւին: Երբ Եսաւն ու Յակոբը ծնան, որպէս երկուորեակ, Յակոբ Եսաւին գարշապարը բռնած դուրս ելաւ, որ կը նշանակէր թէ Յակոբ պիտի խաբէր Եսաւին: Ուրեմն, Չարին դաքապարտութեան ժամանակ եւս երբ Աստուած պարիժը կը սահմանէ եւ ձեռով մըն ալ պարկերացումը կու փայ թէ ինչպիսին պիտի ըլլային յարաբերութիւնները Չարին եւ Կնոջ սերունդին միջեւ. «ան քու գլուխդ պիտի ջախջախէ, իսկ դուն անոր գարշապարը պիտի խայթես»: Այսինքն մնայուն խաբելու, ծուղակը ձգելու ճիգեր պիտի ընէ Չարը մարդուն:

Ահա այս երեւոյթը նկարի առած, Հարսը ինքն ալ արեւնով մեղքին մէջ իյնկած, իսկ հիմա որ Քրիստոսով մաքրուած ու գեղեցկացած, անոր քայլերը եւս գեղեցիկ են, մանաւանդ՝ կօշիկներով: Կօշիկներ, որոնք ձեռով մը պաշտպանութեան, պահպանութեան համար կ'օգտագործուին: Այս պարագային մեր գիտցած սովորական կօշիկի մասին չէ խօսքը, այլ որքան աւելի արդարութեան կօշիկներու մասին, այն կօշիկը որ նաեւ փրուեցաւ անառակ որդիին, անոր վերադարձին: Արդարութեան կօշիկներ, որոնք պիտի ամրացնեն հաւաքացեալին ուրբը, աւելի գեղեցիկ պիտի ընեն, եւ այնպէս մը որ ալ վախ պիտի չունենայ Չարէն, ու անոր պարճառած խայթոցէն: Մանաւանդ այն ուրբերը, որոնք լուսացուցան նոյնինքն Յիսուս Քրիստոսի կողմէ վերնաբան մէջ, Վերջին Ընթրիքին: Ոչ թէ միայն վախը պիտի չունենան, այլ փակաւին գորացած ու գեղեցկացած նոյնիսկ ի վիճակի պիտի ըլլան կոխկրփելու օծին ու վիշապին գլուխը (Սաղմոս 91:13 հմմտ Դուկաս 10:19):

Տակաւին, «**Քու բարձերուդ կազմուածը՝ երեսելի արուեստագէտի մը ձեռքով շինուած՝ մանեակներու կը նմանի**»: Ոչ թէ միայն Հարսին քայլերը կօշիկներով գեղեցկացան, այլ բարձերուն կազմուածքը: Այս պարագային բարձը այն առարկան է որ գլուխը կը շալակէ եւ հանգիստ կու փայ մարդուն: Նոյնպէս ալ Աստուածաշունչի գիրքերուն գիտութիւնը եւ Աստուծոյ պատուիրաններուն իմաստները գիտուն մէջ եւ ուղեղին մէջ եղած իմաստներուն շալակողն ու հանգիստն է, որովհետեւ անոնց մէջ եւ անոնցմով է որ մարդը իր հանգիստը կրնայ գտնել այն բոլոր դժուարութիւններուն որոնք իր առջեւ են: Այդ բարձին վրայ մանեակներ կան, եւ այս մանեակները ուրիշ բան չեն եթէ ոչ Աստուծոյ պատուիրանները:

«**Քու երկու սրինքդ նման են երկու ուլերու, որոնք այծեամի մը ծնած երկուրեակներն են**»:

Հեքաբրքրական բացատրութիւն մըն է, որուն մէջ կարելի է փեսանէլ հետեւեալ ճշմարտութիւնը: Ըստ Գրիգոր Աստուածաբանին մարդուն մէջ կայ միտք եւ հոգի, որոնք երկուքն ալ կապ ունին սրտին հետ, այսինքն խորհրդանշական իմաստով սրինքներուն հետ: Ուրեմն, ինչպէս որ սրինքը կաթնաման է եւ կենսաբան կերակուր է մանուկներուն, նոյնպէս եւ միտքը ու հոգին արթուն, լուսաւոր եւ սրահայեացք են, ինչպէս այծեամը, որպէսզի աստուածային հեռաւոր խորհուրդները մօտիկէն կարենայ փեսանէլ:

Փեսան շարունակելով իր գովեսարը Հարսին գեղեցկութեան, կը ներկայացնէ թէ երկնային շնորհներով լեցուեցաւ Հարսը: Ծնորհներ, որոնք գանձեր են փրուած Հարսին, հաւաքացեալներուն: Գանձեր, որոնք փրուած են այս հողեղէն ամաններուն մէջ դրուելու: Պօղոս Առաքեալ այս խորհուրդը կը բացատրէ այնպէս մը, որ կ'ըսէ. «որպէսզի գորութեան առաւելութիւնը Աստուծմէ ըլլայ եւ ոչ թէ մեզմէ» (Բ Կորնթ 4:7): Այնպէս ինչպէս Մարիամ Աստուածածինը, որպէս փկար բնութիւն, հողեղէն աման, կրցաւ իր մէջ առնել աստուածային բնութիւնը եւ ծնունդ փայ Անոր: Նոյնպէս ալ փկար բնութեան մարդիկ ընկալելով Սուրբ Հոգիի շնորհները, եւ Աստուծոյ Խօսքը իբրեւ ցորենի հատիկներ, վարդապետութեան արամներով աղացին, հաց դառնալու եւ իբրեւ հոգեւոր կերակուր փալու անոնց, որոնք քաղցը եւ կարօսը ունին:

«**Ռունքերդ Լիբանանի աշտարակի կը նմանին, դէպի Դամասկոս նայող**»: Հեղափոխական արտայայտութիւն մըն է: Ռունքները ընդհանրապէս կը գործածուին հոփոտալու, այս պարագային հոփոտալու մաքուր իւղի բոյրի անուշութիւնը, որ երկնայինն է: Այնպէս ինչպէս Պօղոս Առաքեալ, աստուածաճանաչողութիւնը Դամասկոսի ճամբուն վրայ սրացաւ, իսկ Դամասկոսցի Անանիան անոր աչքերը բուժեց, ահա այն արեւն այդ հիանալի հոփը հոփոտաց եւ հոփոտել փուռա հեթանոսներուն:

«**Գլխուդ հիստուածքը իբրեւ ծիրանի, իբրեւ թագաւորի թագ է**»: Ամենակարեւոր բաժինը մարդ արարածին գլուխն է, որտեղ գերեզուած է ուղեղը, այնպէս կան իմաստութիւն, լուսափայտ աչք, քիմքի եւ հոփոտալիքի կազմը, ականջները, բերանը, ու մանաւանդ՝ մարդու խորհուրդները, խօսքերն ու գործերը, առաքիւնութիւնը, սրբութիւնը, սէրը եւ ողորմութիւնը, ահա այս գլուխն է որ կը պսակուի ծիրանի, իբրեւ թագաւորի թագով: Ահա այս պսակն է որուն ցանկացին սուրբերը, եւ երանի բոլոր անոնց որոնք արժանի կ'ըլլան այս պսակադրութեան, որովհետեւ ասով նաեւ թագակից կը դառնան Քրիստոսի թագաւորութեան:

«**Որչափ գեղեցիկ, եւ որչափ քաղցր ես**»: Փեսան մէկ առ մէկ թուելէ ետք այն բոլոր մասերը Հարսին, անգամ մը եւս կարծէք խտրուած ձեւով կը ներկայացնէ Հարսին գեղեցկութիւնը, որ խորքին մէջ մարդ արարածին ճշմարիտ գեղեցկութիւնն է, երբ մանաւանդ անոր բոլոր զգայարանքները կը ծառայեն Աստուծոյ կամքին, հաղորդ կը դառնան աստուածային գործերուն:

Ահա այս գեղեցկութիւնը այնքան ցանկալի եղաւ Փեսային համար, որ ուզեց իջնել իր աստուածային փառքէն եւ հանգչիլ, բնակիլ Հարսին մէջ: Ահա ասով ցոյց կու տայ Աստուծոյ, Փեսային անսահման սէրը հանդէպ Հարսին: Եսայի մարգարէին բերնով այսպէս կ'ըսէ Տէրը. «Երկինքը իմ աթոռս է, ու երկիրը իմ ոտքերուս պարուանդանն է: Այս ի՞նչ փուն է որ ինծի համար կը շինէք: Եւ այս ի՞նչ տեղ է իմ հանգստութեանս համար: Ես ո՞ր պիտի հանգչիմ եթէ ոչ հեզերուն եւ խոնարհներուն մէջ, եւ անոնց, որոնք իմ խօսքիս երկիւղը ունին» (Եսայի 66:2):

Տակաւին շարունակելով. «**Քու հասակդ արմաւենիի, ու սրինքներդ՝ ողկոյզներու կը նմանին**»: Այնպէս ինչպէս արմաւենիի հասակն ու մեծութիւնը, նոյնպէս ալ Հարսին մեծութիւնն ու հասակը: Իսկ սրինքները, ինչպէս մանուկին համար ախորժելի են: «**Ըսի, Արմաւենիին վրայ ելլեմ, անոր ոտքերուն փակչիմ**»: Ահա Աստուծոյ անսահման սէրը հանդէպ Հարսին, մարդ արարածին, որ մէկդի ձգելով քերովքներու վրայ հանգչիլը ուզեց իջնել եւ մարդոց մէջ բնակին, ինչպէս պիտ ըսէ Յովհաննէս Աւետարանիչը. «Եւ բանը մարմին եղաւ եւ մէջ մէջ բնակեցաւ» (Յովհ 1:14):

«**Սրինքներդ՝ խաղողի ողկոյզներու պէս են. ռնգունքներուդ հոփը խնձորներու հոփին պէս թող ըլլայ: Քու համբոյրդ ազնիւ գինիի պէս**»: Այնպէս ինչպէս ողկոյզը նախքան ուրելը, նախ աչքին զուարճութիւն կու տայ, նոյնպէս ալ սրտիդ սրինքներէն բխած շնորհներու խօսքերը նախ լսելիքին ախորժութիւն կու տան: Իսկ սրբութեան վարքի անուշահոփութիւնը խնձորի անուշահոփութեան, ինչ որ նաեւ հաճելի կը թուի Աստուծոյ ոչ թէ ընծաներուն անուշահոփութիւնը, այլ ընծայողին սրտին մաքրութիւնը: Ի վերջոյ, ինչպէս ազնիւ գինին ուրախութիւն կը պատճառէ խմողին, նոյնպէս ալ սուրբերուն երգը ուրախութիւն կը պատճառէ Փեսային: